*ՆԱԽԱԳԻԾ*

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«___» _____ 2017 թվական N_____-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 613-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է***.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 12-ի «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի այլ կորուստների չափերը սահմանելու կարգի մասին» N 613-Ն որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) կարգի 3-րդ կետում «կամ հարկ վճարողի կողմից» բառերը փոխարինել «կամ Արցախի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից կամ ազգային կամ միջազգային կամ միջպետական ստանդարտներով (ՀՍՏ, ԻՍՕ կամ ԳՕՍՏ)» բառերով.

2) կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետից հանել «կամ սահմանված կարգով իրականացված գույքագրման արդյունքներով» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՆԱԽԱԳԱՀ** **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**